ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 9 » սեպտեմբերի 2022 թվականի N: 476-Ա ք.Գյումրի

ԼԻԼԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ, 7-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 01/09.2/21056-2022 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Լիլիթ Մուրադյանի 2022 թվականի սեպտեմբերի 8-ի զեկուցագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Լիլիթ Մուրադյանին 2022 թվականի սեպտեմբերի 9-ին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի մասնակցությամբ կայանալիք հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման համակարգին առնչվող հարցերի վերաբերյալ հանդիպում-քննարկմանը մասնակցելու նպատակով:

2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ին:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է